# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կարիքների համար գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով «ՀՀ ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-25/16» ծածկագրով գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

գ. Ախուրյան

« 06 » օգոստոսի » 2025թ.
ժամը 11:00

*Մասնակցում էին*

*Հանձնաժողովի նախագահ*՝ Հրաչյա Չինոյի Սահրադյան /Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ/

*Անդամներ*՝ Արթուր Արայի Ասլանյան /Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետ/

Անահիտ Արամայիսի Յավրումյան /ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ/

*Հանձնաժողովի քարտուղար*՝ Ինգա Հովհաննեսի Մարտիրոսյան /ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ/

***«ՀՀ ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-25/16» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին.***

Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի, Ախուրյան բնակավայրի, Գյումրու խճուղի 42 հասցեում: Գնման առարկա է հանդիսանում՝ **Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունները:**

### 1. Գնանշման հարցման ձևով գնման հայտերի բացման մասին

1.1. Ընդունել ի գիտություն

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը | Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար |
|---|---|---|---|
| 1 | «ԼԻՎԱԼ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ | ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Հ. Շահբազյան 10 տուն | livalcontrol@mail.ru Հեռ.՝ +37493 32 42 43 |
| 2 | «ՄԻԿԱՆ» ՍՊԸ | ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Գործարանային նրբ. 21 | mikkar89@mail.ru հեռ.՝ +374 98 203208 |
| 3 | «ԲԵUS ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ | ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Արագած փողոց, շենք 1, բն. 16 | bestproject@mail.ru հեռ.՝ +374 98787032 |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | «ՎԵՐՍԻԿԱԼ» ՍՊԸ և «ՇՀԾ» ՍՊԸ ՀԳ | ՀՀ ք. Երևան, Լվովյան փ. 14շ. 42բն.<br>ՀՀ ք. Երևան, Դավթաշեն 1 թաղ, 13շ. 5բն | verticale.llc@gmail.com<br>հեռ.՝ +374 55 66 62 29<br>vazgenharutyunyan92@gmail.com<br>հեռ.՝ +374 44 83 28 82 |

բ/ **Գնանշման հարցման** հայտարարությամբ սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պայմաններին չհամապատասխանող հայտեր չեն ներկայացրել:

1.2. **Գնանշման հարցման հայտարարությամբ** սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը հայտարարությամբ սահմանված պայմաններին նախնական տվյալներով.

- «ԼԻՎԱԼ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում բացակայում են որակավորման չափանիշներով սահմանված փաստաթղթերը:
- Մյուս մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:
- Մասնակիցների ներկայացված փաստաթղթերը կամված են բնօրինակից և մեկ օրինակ պատճենից:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:**

1.3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 41-րդ կետի՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Համաձայն նույն որոշման 42-րդ կետի եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ելնելով վերոգրյալից.

## 2. ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

2.1. «ՀՀ ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-25/16» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 07-ը, ժամը 18:00-ն, գնահատող հանձնաժողովի քարտուղարին հանձնարարվեց « ԼԻՎԱԼ ՔՈՆԹՐՈԼ » ՍՊԸ-ին ծանուցել անհամապատասխանության մասին և առաջարկել մինչև նիստի կասեցման ժամը կատարել համապատասխան շտկումը:

2.2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2025 թվականի օգոստոսի 08-ին ժամը 11:00-ին, ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի 42 հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

***Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.***

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | ____________ | Հրաչյա Սահրադյան |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | ____________ | Արթուր Ասլանյան |
| | ____________ | Անահիտ Յավրումյան |
| **Հանձնաժողովի քարտուղար՝** | ____________ | Ինգա Մարտիրոսյան |